

ԲԱՅԻ ՍԵՌԵՐԸ ԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Ա. ՄՈՒՐՎԱՅԱՆ

Բայի սեռերի մասին համեմատաբար ավելի շատ փաստեր ընդգրկել են Ա. Այտընյանը և Մ. Աբեղյանը՝ մեկը արևմտահայ և մյուսը արևելահայ աշխարհարարի վերաբերյալ: Այսպես՝ Ա. Այտընյանն իր քերականության մեջ՝ ընդունում է բայի երեք սեռ՝ «1. ներդրական, 2. կրավորական և 3. չեզոք»: Այդ սեռերը բնորոշում է այսպես՝ «Ա. ներգործական այնպիսի գործողություն մը կը ցուցնեն՝ որ մեկը մեկուն կրնն, զորօրինակ. դուն հայրդ կը սիրես, ես փայտ կոտորեմ:— Բ. կրավորական՝ որ ներգործականեն հառաջ կու գա, այնպիսի գործողություն մը կը ցուցնեն՝ որն որ մեկը մեկեն կը կրն կամ որ մեկը կ'ըլլի. զորօրինակ. Հայրդ քեզմե կը սիրվի. փայտն իզմե կոտորվի:— Գ. Չեզոք. այնպիսի գործողություն մը կը ցուցնեն՝ որ նույն անձին վրա կը մնա և ուրիշին չանցնիր, զորօրինակ. դու կը կ'անաս. տղան կու լա. Շունը կը վագն» (էջ 52):

Այնուհետև խոսում է կրավորական բայի իմաստային երանգավորումների մասին: Կրավորական բայը, որ ըստինքյան ուրիշից կրել է ցույց տալիս, «շատ անգամ պարզապես չեզոքի տեղ կգործածվի» և բերում է օրինակներ, ինչպիսիք են՝ «Այդ մարդուն բնավորությունն հիմա բոլորովին փոխված է: Ամեն խոսքի մեջ ներվիլ խոհեմություն չէ» և այլն, ինչպես նաև՝ «լվացվի, սրվի, ներվիլ և այլն. այսինքն՝ ինք զինքը լվալ, սրել, ինք զինքը նետել: Իսկ ինքզինքը պահել կըլլա առանձին ձևով՝ պահվրտել (փխկ. պահվիլ՝ որ զուտ կրավորական է)» և այլն: Կրավորականը գործ է ածվում նաև «իրարու մեջ փոխադարձ գործողություն ցուցնելու համար», ինչպես, օրինակ, «երկու բանակներն (իրարու) զարկվեցան, և հաղթությունն երկար ատեն անորոշ մնաց: Առաջին տեսնվելու՝ մեկը զմեկ չճանչցանք»³: Առանձին ձևով փոխադարձ են նաև «ծեծվիլ և պագավիլ (փխկ. ծեծվիլ, պագնվիլ՝ որ զուտ կրավորական են)» և այլն:

¹ Ա. Այտընյան, Քննական քերականությունն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 52:

² Նույն տեղում, էջ 205—207:

³ Նույն տեղում:

⁴ Հատ նրա՝ արևմտյան աշխարհարարում «շատ բայեր կրավորականեն դատ չեզոք մ'ալ ունին, որ նույնպեռ ներգործականեն կածանցի -իլ մասնիկով. ինչպես կոտորիլ: Սա նշանակության տեսակետից կրավորականից նրանով է տարբերվում, որ «չեզոք ըլլալով՝ չէ թե ուրիշեն կրել կամ ըլլվիլ, այլ ինք իրմե ըլլալ մը կըցուցնեն» և բերում է հետևյալ օրինակները՝ «Ներգործական՝ կտրել, կոտրել, աղբել, թափել, ազատել, պատռել, տարածել, ծռել, մարել», սրանցից «չեզոք՝ կըտրիլ, աղբիլ, թափիլ, ազատիլ, պատռիլ, տարածիլ, ծռիլ, մարիլ» և «կրավորական՝ կարվիլ, կոտրվիլ, թափվիլ, ազատվիլ,

Այտրենյանից ութ տարի հետո, արևելահայ աշխարհարարի քերականության մեջ, Ս. Պալասանյանը մի քանի գծերով, շատ համառոտակի տալիս է մեր աշխարհարարի բայի սեռերի մասին հետևյալը. «բայերը երեք սեռ ունեն. ներգործական, կրավորական և չեզոք, որոնք բնորոշված են ընդհանուր ձևով՝ «ներգործական բայն ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ անցնում է ուրիշ առարկայի վրա:—Հաղթեց ներգործական բայ է: Կրավորական բայն ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ մի առարկա կրում է ուրիշ առարկայից:—Հաղթվեցավ կրավորական բայ է: Չեզոք բայն ցույց է տալիս առարկայի գոյությունը, կամ այնպիսի գործողություն, որ չի անցնում ուրիշ առարկայի վրա, այլ գործողի մեջ է մնում:—Դնացին, ընկան չեզոք բայեր են» և այլն¹:

Մեր աշխարհարարի բայերի սեռի մասին համեմատաբար շատ ավելի ընդարձակ խոսում է Մ. Արեղյանը իր «Աշխարհարարի շարահյուսություն» մեջ խնդիրը քննելիս²: Անցողական բայերը «նայելով ենթական հարաբերությանը՝ բայիմաստի հետ» բաժանում է՝ «1. ներգործական բայեր, որոնց ենթական ինքը կատարում է գործողությունը, օրինակ՝ Տիգրանը նստակ դրեց: 2. Պատճառական բայեր, որոնց ենթական ինքը չի կատարում գործողությունը, այլ միայն պատճառ է լինում ուրիշին մի բան կատարելու. օրինակ՝ վարժապետն աշակերտին ուրիշ տեղ նստեցրեց (այսինքն՝ ոչ թե ինքը նստեց, այլ պատճառ եղավ, արեց, որ աշակերտը նստի)»³, Իսկ անանցողական բայերը բաժանում է. «1. Կրավորական բայեր, որոնք ունեն կամ կարող են ունենալ ներգործող խնդիր, որի գործողությունը ենթական կրում է իր վրա (կրող ենթական). օրինակ՝ Տիգրանը հաղթվեց Արտաշեսից: 2. Չեզոք բայեր, որոնք չեն կարող ունենալ ներգործող խնդիր և ենթական ուրիշի գործողություն չի կրում. օրինակ՝ Տիգրանը հեռացավ»⁴ և այլն:

Մեր նոր դպրոցական քերականության մեջ⁵ ընդունված է շորս սեռ, այսպես՝ «Հայերենում բայերն ունեն շորս սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոք և անդրադարձ» (ընդգծումը հեղինակինն է)⁶: Սա նախորդներից տարբերվում է հատկապես նրանով, որ այստեղ առանձնացված են անդրադարձ սեռի բայերը, որոնք հնում համարվել են կա՛մ չեզոքի տեղ գործածվող բայեր (Այտրենյանի մոտ) և կա՛մ անդրադարձ իմաստով գործածվող բայեր (Արեղյանի

պատովի, տարածվի, ծովի, մարվի» և այլն: Բայց միամամանակ նշում է, որ «արդի լեզվի մեջ ալ տանդ կրավորականը ցանցառ կըգործածվի, և կամ իրեզ գիմագուրեկ», ինչպես, օրինակ՝ «նոսենի՛ն տնկելու համար բնույն մեկ մասը կը ծռվի... Զրույն մեջը պաղլեզի կտորվանք կը քաշվի... Կրի քարը կայրվի եւ մարվի...» և այլն (նույն տեղում, էջ 88—89):

¹ Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874, էջ 51—52:

² Մ. Արեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 19—27:

³ Նույն տեղում, էջ 22: Պատճառական բայերի մասին մանրամասն տե՛ս իմ հոդվածում «Հայոց լեզվի պատճառակերպ բայերը», Հայկական ՍՍԽ ԳԽ «Տեղեկատվություն», 1957, № 12:

⁴ Մ. Արեղյան, նույն տեղում, էջ 22—23:

⁵ Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք 5-րդ և 6-րդ դասարանների համար, Հայկահայրատ, 1954, էջ 250: Նույնի՝ Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954, էջ 324—339:

⁶ Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, էջ 334:

մոտ)¹։ Անդրադարձ սեռի բայերը մի տեսակ կրավորական-չեզոք բայեր են, որոնց հետ հանդես եկող ենթական դիտակցվում է իրրե գործողություն կատարող և ոչ թե կրող առարկա կամ անձ՝ գործողությունը կատարելով ինքնին կամ ինքն իր վրա։ Լեզվական այս երևույթը նկարագրելով՝ իր աշխատության մեջ Հ. Բարսեղյանը չի ընդունում անգրագրած սեռ և միտում է Արեղյանի տեսակետին²։

Այսպես է նաև մյուս քերականների մոտ։

Բայի սեռերը մեր քերականների մոտ արված են դասագրքի կամ ձևոնար-կի սահմաններում, մի քանի էական կողմերով։ Մենչդեռ նրանց քննությունը նոր նյութի հիման վրա, անհրաժեշտ մանրամասնությամբ ու խորությամբ, կարևոր է ու հետաքրքրություն է ներկայացնում լեզվի քերականական կառուցվածքի տեսակետից։ Ուստի այստեղ տալիս ենք մեր նյութի քննությունը։



Ինչպես հայտնի է, ահցողական և անաղական բայերը կարող են ընդունել անուղղակի խնդիրներ։ Այս տեսակետից դրանք չեն տարբերվում իրարից։ Պրանց տարբերակիչ ու յուրահատուկ կողմն այն է, որ միայն անցողական բայերն են պահանջում ուղղակի խնդիր (հայցական հոլովով), իսկ անանցողական բայերը զուրկ են դրանից։ Այս տարբերակումը կատարվում է կապակցությունների կամ նախադասությունների մեջ, շարահյուսության տեսակետից։

Սա իր հերթին քերականական սեռի տարբերական նախադրյալն է։ Սեռը ցույց է տալիս, թե խնդրիս փոխհարաբերություն կա գործողության կատարողի (ենթակայի) և բայի գործողության առարկայի (խնդրի) միջև, որ իր այս կամ այն արտահայտությունն է գտնում բայաձևի մեջ։ Սա ցույց է տալիս, թե արդյոք գործողությունը եղնում է ենթակայից և ուրիշ առարկայի վրա՝ է անցնում, կամ ինքը՝ ենթական է կրում այդ գործողությունը, թե՞ գործողությունը եղնում է նրանից, բայց այնպես, որ ոչ ուրիշ առարկայի վրա է անցնում և ոչ էլ ուրիշի ազդեցությամբ է կատարվում։ Այս տեսակետից անցողական են բոլոր ներգործական ու պատճառական բայերը և անանցողական են բոլոր կրավորական ու չեզոք բայերը։

Սեռը սովորաբար դրսևորվում է կամ կրավորականի -վ ածանցով՝ սկրդր-նական ներգործական ձևից (օր.՝ գրել-դրվել), կամ էլ պատճառականի -ցն (-եցն, -ացն) ածանցով՝ սկզբնական չեզոք ձևից (օր.՝ թռչել—թռցնել), կազմելով իրար հակադիր կամ զուգակից ձևեր։

¹ Այսպես՝ բառ Արեղյանի կրավորական բայերը գործ են ածվում՝ «1. բուն կրավորական իմաստով, մանավանդ երբ ներգործական բայը հոգն. երբուրդ գեմբով անենթական գործածությամբ է, ուստի և կրավորական սեռի մեջ հունի ներգործող խնդիր, օրինակ՝ արյունն աշյունով չեն լվանալ—արյունն արյունով չի լվացվիր։ 2. Անգրագրած իմաստով, երբ ենթական ոչ թե մի ուրիշ առարկայի, այլ յուս իսկ գործողության ազդեցությամբ է կրում յուր վրա. օրինակ՝ նա լվացվեցավ, սրվեցավ (այսինքն՝ լվաց, սրեց ինքն իրեն)։ 3. Փոխադարձ իմաստով, օրինակ՝ նրանք համբուրվեցան (այսինքն՝ համբուրեցին իմայանց)։ 4. Չեզոք իմաստով, երբ ենթական իրան իրան լինում է մի վիճակի մեջ... Օրինակ՝ լույսը բացվեց, աստղերը գունարափվում են. ոսկեգույն ամպերն արդեն զլորվում են օդի բարձրության մեջ. քամին շարժվում է մեղմիկ» (Մ. Արեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, էջ 25—26)։

² Հ. Խ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 119—132։

Հայերենում ընդունված է հիմնականում բայի երեք սեռ՝ ներգործական, կրավորական և չեզոք: Ներգործականի որոշ տեսակը պատճառական բայեր են¹, իսկ կրավորականի որոշ տեսակն էլ՝ անդրադարձ: Անցողական բայերը լինում են ներգործական և պատճառական, իսկ անանցողական բայերը՝ չեզոք, կրավորական և անդրադարձ:

Ա. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅԸ

Ներգործական սեռի բայը նույն անցողական բայն է և ցույց է տալիս ուրիշ առարկայի վրա անցնող գործողություն, որ իր վրա է կրում այդ առարկան: Այլ կերպ ասած՝ ենթական իր գործողությունը կատարում է ուղղակի խնդրի վրա: Սա չունի իր ձևական ցուցանիշը (ինչպես այդ պատճառական և կրավորական ձևերի մեջ է), դա կախված է շարահյուսական կառուցվածքից կամ խնդրառությունից: Օրինակ՝ խմում է ջուր, գում է նամակ, հավաքում է բերք, կազմում է գիրք և այլն: Այստեղ՝ խմել, գրել, հավաքել, կազմել բայերը ներգործական սեռի բայեր են, որովհետև ցույց են տալիս ուրիշ առարկայի վրա անցնող գործողություն (առարկա, որն այդ գործողությունն իր վրա է կրում)՝ խմվում է ջուրը, գրվում է նամակը, հավաքվում է բերքը, կազմվում է գիրքը) և այլն:

Այսպիսով, ներգործական ձևերը կարող են սովորաբար շրջվել, դառնալ կրավորական ձևեր, այսպես՝ ասել-ասվել, խոսել-խոսվել, թափել-թափվել, շտիկել-շտիկվել, կախել-կախվել, մաղել-մաղվել և նման այլ բաղմամբիվ օրինակներ:

Բայց կան որոշ անցողական բայեր, որոնք չունեն իրենց հակադիր՝ կրավորական ձևերը (կամ դրանք սովորական, դործածական չեն): Դրանցից են, օրինակ՝ զիսեմալ, ուզեմալ կամ ուզել, կամեմալ, ցանկանալ, հուսալ և այլն:

Այս տեսակետից պարզ է, ուրեմն, որ անցողական բայերը թվով ավելի շատ են, քան ներգործական բայերը: Այլ կերպ ասած՝ բոլոր ներգործական բայերը անցողական են, իսկ բոլոր անցողական բայերը ներգործական չեն:

Բ. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅԸ

Կրավորական սեռի բայը ներգործականի շրջված ձևն է (-վ ածանցով) և ցույց է տալիս, որ ենթական իր վրա է կրում մի ուրիշի գործողություն: Այլ կերպ ասած՝ կրավորականի ժամանակ ենթական կրում է այն, ինչ որ ուղղակի խնդիրը՝ ներգործականի ժամանակ, միայն թե բայաձևից չի երևում, թե ումից է կրում կամ ինչից, թեև կապակցությունների կամ նախադասությունների մեջ կարող են հանդես գալ համապատասխան անուղղակի խնդիրները:

Այսպես, օրինակ, ներգործական կառուցվածքն է՝ «մարդու և կնոջ վեճը ընդհատեց դռան թակոցը» (Ձ. 6), սրա կրավորականն է՝ «մարդու և կնոջ վեճը ընդհատվեց դռան թակոցից»: Մինչդեռ կրավորական կառուցվածքն է՝ «նա ինչից է վիրավորվել» (Ձ. 97), սրա ներգործականն է «ինչն է նրան վիրավորել»: Նույն կրավորական կառուցվածքով են, օրինակ, «Այդ հեղեղական դիտո-

¹ Այստեղ չենք խոսելու պատճառական բայերի մասին. ալդ մասին ունենք առանձին հոդված (տե՛ս մեր «Հայոց լեզվի պատճառակերպ բայերը», «Տեղեկագիր», 1957, № 12: Տե՛ս և համաոտոագրությունները):

զուգականներից խոր խոցվեց կոմերիտական կազմակերպության քարտուղար Վասակ Չոբանյանը (Զ. 14), «աչքերը... վառվում էին սարսափից» (Զ. 21) և այլն:

Այստեղ՝ ընդհատվել, վիրավորվել, խոցվել, վառվել բայերը կրավորական են (ի հակադրություն՝ ընդհատել, վիրավորել, խոցել, վառել ներդործական բայերի): Այսպես կրավորական են նաև՝ զլորվել, հավաքվել, տարվել, շարվել, քանդվել, կլանվել, կախվել, թափվել և այլն:

Կրավորական նշանակության տակ սովորաբար հասկացվում է այնպիսի փոխհարաբերություն գործողություն կատարողի (ենթակայի) և գործողության առարկայի (խնդրի) միջև, երբ ուղղակի խնդիրը նախադասության մեջ հանդես է գալիս որպես ենթակա, իսկ ենթական որպես անուղղակի խնդիր («Քամին տերևները թափեց» → «տերևները թափվեցին քամուց»): Շարադասական նման կապակցություններ սովորաբար քիչ են պատահում:

Գ. ԱՆԴՐԱԴԱՐՁ ՍԵՌԻ ԲԱՅԸ

Անդրադարձ սեռի բայը ցույց է տալիս, որ ենթական գործողություն կատարում է ինքնին կամ ինքն իր վրա: Այսպիսի բայերը կրավորական-անդրադարձ բայեր են:

Երբ սովորաբար անցողական-ներգործական բային ավելանում է -վ ածանցը, բայն այդպիսով կորցնում է անցողականության — ներգործականի գաղափարը և այլևս ի վիճակի չի լինում ուղղակի խնդիր առնելու: Այդպիսով ենթակայի մեջ կատարվում է գործողության մի տեսակ կենտրոնացում, պարփակում, ինչպես, օրինակ՝ «մարդիկ դուրս քափվեցին, հավաքվեցին փողոցում», «Զյուներ հալվեց, լցվեց առում», «Անձրևը կտրվեց», «Երեխան հագնվեց, լվացվեց ու դուրս նետվեց փողոց», «Բորբոքվեց Մաթոս Գրիգորյանը» (Զ. 27), «ուր գտնվում էր նրա բնակարանը» (Զ. 35), «Փոխադրվեց տասնամյակի վերջին դասարանը» (Զ. 37) և այլն:

Այստեղ՝ դուրս քափվել, հավաքվել, հալվել, լցվել, կտրվել, հագնվել, լվացվել, սանրվել, դուրս նետվել, բորբոքվել, գտնվել, փոխադրվել և նման շատ ուրիշ կրավորական բայեր անդրադարձ սեռի բայեր են, որովհետև այսպիսի կրավորական ձևերի առկայությամբ ենթական սովորաբար գործողությունը կրում, կենտրոնացնում է իր մեջ, այն կատարում է ինքնին¹:

Մի քանի օրինակներ բերենք դրականությունից, այսպես՝ «ահա քափվում են ահազանդի հեռագրեր» (ԱԲ. 177), «—Լեոնը հագնվեց» (ԱԲ. 117), «օրորվում է լամպը» (ԱԲ. 177), «միայն ձեռքն էր շարժվում» (ԱԲ. 178), «Մի քիչ տատանվում է» (ԱԲ. 181), «Հարյուրավոր պատուհաններ բացվում են փողոցի վրա» (ԱԲ. 182), «պատշգամբի տակ հորդ անձրևին պահվել էին» (ԱԲ. 182), «որի մի թևը մյուս փողոցի վրա էր շրջվում» (ԱԲ. 182), «մշուշի միջից ցցվում էին բարձր սյուները» (ԱԲ. 182), «և չէր պղտորվել առուն» (ԱԲ. 183), «Դիլան դային ...պահվեց քարի հետևը» (ԱԲ. 233), «Արտերը խանձվել են և հաց չկա» (ԱԲ. 317) և այլն:

¹ Այսինքն՝ «ինքն իրեն», այսպես, օրինակ՝ «նա իրեն նետեց դուրս» (Թ. 9) — հմտ. «սարսափահար դուրս նետվեց» (Թ. 58): «Շուշանիկը լսեց ավտոի ազդանշանը և իրեն նետեց պատշգամբ» (Թ. 320) = նետվեց. «...և յուր անձը նվիրել» (Բ. 245) = նվիրվել, և այլն:

Ծ ա ն ո թ ո Ւ Ր Յ Ո Ւ Ն .— Մի շարք բայեր, բացի անդրադարձ բայերից, ձևով կրավորական են, բայց արտահայտում են շեղոք սեռի իմաստ և կոչվում են կրավորաձև շեղոք բայեր, ինչպիսիք են, օրինակ՝ ուշաթափվել, փշաքաղվել, հուսահատվել, գանդատվել, մոայլվել, պապանձվել, սթափվել, հարձակվել, համարձակվել, հարմարվել և այլն (տե՛ս ներքևում):

Գ. ՉԵՂՈՔ ՍԵՌԻ ԲԱՅԸ

Չեղոք սեռի բայը ցույց է տալիս, որ ենթական «գործում» է այնպես, որ ուղղակի խնդիր չկա, բայց այդ գործողությունը չի «կրում» իր մեջ, ինչպես այդ կրավորական ձևերի ժամանակ է: Այլ կերպ ասած՝ նման բայերի գործողությունն կամ եղելության կատարման համար չի պահանջվում հատկապես մի առարկա, որն իր վրա կրի այդ գործողությունը կամ եղելությունը:

Չեղոք բայերը, եթե կարելի է այսպես տեսլ, ձևով նման են ներգործականին, իսկ ֆունկցիայով՝ կրավորականին: Այսպես, օրինակ՝ վազել, հոսել, թռչել, մնալ, եռալ, լալ, դառնալ, տաքանալ, ուրախանալ և այլն, որոնք կարող են ունենալ (կազմել) իրենց հակադիր՝ անցողական (պատճառական) ձևերը՝ վազել-վազեցնել, հոսել-հոսեցնել, թռչել-թռցնել, մնալ-մնացնել, եռալ-եռացնել, լալ-լացացնել, դառնալ-դարձնել (<դարձցնել <դարձուցանել>, տաքանալ-տաքացնել, ուրախանալ-ուրախացնել և այլն):

Ուղղակի խնդրի հանդեպ ունեցած ենթակայի կապի տեսակետից շեղոք բայը ունի կրավորականի հատկություն: Ենթական ալտեր էլ գործում է, այսպես ասած, իր համար, առանց ուրիշ առարկայի վրա գործողություն կատարելու: Այս տեսակետից նա կրավորականի հետ միասին է, և երկուսն էլ հակադիր են ներգործականին (օր.՝ իջնել-իջեցնել-իջեցվել. մտնել-մտցնել-մտցվել. ամրանալ-ամրացնել-ամրացվել), որը ձևաբանորեն ուղղակի խնդիր է առնում և շարահյուսորեն անցողական է:

Չեղոք սեռի բայը տարբերվում է թե՛ ներգործականից և թե՛ կրավորականից: Ներգործականից սովորաբար տարբերվում է ֆունկցիայով, իսկ կրավորականից՝ ձևով:

Չեղոք սեռի բայերը նույնն են, ինչ որ անանցողական բայերը, միայն թե չեղոք բայերը անանցողական բայերի մի մասն են կազմում:

Այլ կերպ ասած՝ եթե անանցողական բայերից հանենք կրավորական բայերը, տակը կմնան շեղոք բայեր:

Ե. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՉԵՎԵՐԻ ՓՈԽՆԿՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներգործական և կրավորական ձևերը զուգադրելիս պարզ երևում է, որ մեկը մյուսի շրջված ձևն է: Սկզբնականը լինելով ներգործական սեռը, պարզ է, որ կրավորականը ստացված է նրա շրջումից՝ հատուկ Վ ձևանիշի հավելումով (ուղղակի խնդիրը փոխվելով ենթակայի): Որինականը՝ բաժակը կոտրեց — բաժակը կոտրվեց, տունը շլեկ — տունը շինվեց, նամակը գրեց — նամակը գրվեց և այլն:

Շրջման երևույթը ցայտուն դարձնելու համար վերցնենք հետևյալը՝ «բաժակը կոտրեց» և «բաժակը կոտրվեց»: Առաջին («բաժակը կոտրեց») նախադասությունը լրացնենք ենթակայով՝ «Երեխան բաժակը կոտրեց»: Այստեղ «կոտրեց» բայաձևին համաձայնեցված են «Երեխան» և «բաժակը» գոյա-

կանները, որոնցից առաջինը ենթակա է, երկրորդը՝ ուղղակի խնդիր: Այս նախադասությունը եթե շրջենք, կամ վերածենք կրավորականի, կունենանք՝ «բաժակը կոտրվեց (երեխայից, կամ երեխայի կողմից)», սովորաբար գործ է ածվում՝ «բաժակը կոտրվեց», ուր «կոտրվեց» բային համաձայնեցված է «բաժակը» գոյականը, որպես ենթակա: Շրջման հետևանքով կորչում է ենթական («երեխան»)՝ ստանում ենք նոր բայաձև, որի ենթական է նախկին ուղղակի խնդիրը («բաժակը»): Երբ ասում ենք՝ «երեխան բաժակը կոտրեց», այստեղ հասկանում ենք, թե ո՛վ է գործողություն կատարում և ո՛րն է գործողության առարկան, այսինքն՝ ո՛վ է կոտրում և ի՛նչ է կոտրում, իսկ «բաժակը կոտրվեց» ասելիս միայն այն ենք հասկանում, որ բաժակի հետ նույն բանն է կատարվում, ինչ որ առաջին դեպքում (երբ ասվեց՝ «երեխան բաժակը կոտրեց»), միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում չգիտենք, թե ով է կոտրողը (այսինքն՝ բաժակն ում կողմից կոտրվեց): Նման դեպքերում կրավորականը ունենում է չեզոքի կիրառում, լինելով մի տեսակ կրավորական-չեզոք բայ:

Օրինակ՝ «նա իսկույն նետվեց դեպի անցքը» (Ձ. 21), «հավաքվեցին մարզիկ» (Ձ. 4), «էլուշը դիտմամբ դանդաղում էր հագնվել, ձգվում էր...» (Ձ. 38) և նման այլ բազմաթիվ օրինակներ, ուր կրավորական ձևերի հատկանշական կողմն այն է, որ բայով արտահայտված գործողությունը ներկայացվում է ունալ ձևով, առանց երեւու, թե ո՛վ է գործողության կատարողը:

Ներգործական սեռի բայը կրավորականի շրջելիս՝ ուղղակի խնդիրը զառնում է ենթակա (իսկ ենթական՝ անուղղակի խնդիր, որ հաճախ հանդես չի գալիս, այլ միայն կարող է ենթադրվել): Դա նշանակում է՝ ա՛յն, ինչ որ ուղղակի խնդրի հետ է կատարվում ենթակայից, այդ նույնը կրավորականում կրում է հենց ինքը՝ ենթական (անուղղակի խնդրից, որ չի արտահայտվում, այլ ենթադրվում է միայն), այսպես, օրինակ՝ ալյուրը թափեց—ալյուրը թափվեց, կրակը վառեց—կրակը վառվեց, սլաքը փանդեց—սլաքը փանդվեց և այլն, ուր կրավորական ձևերը ստանում են կրավորական-չեզոքի կիրառում:

Համանման օրինակներ են՝ լսել-լսվել («լսվեց մեկի հեղանական դիտողությունը» Ձ. 14), փշրել-փշրվել («Հողի դուռն ընկնելով գետին՝ փշրվեց»—Ձ. 17), բացել—բացվել («տան գուռը ճոռալով բացվեց»—Ձ. 18) և այլն:

Նույն բանը կարելի է տեսնել նաև հարադիր բայերի և որոշ կարգի դարձվածքային արտահայտությունների մեջ: Նման օրինակներից են՝ դուրս թափել—դուրս քափվել («մարդիկ դուրս թափվեցին տներից»—Ձ. 50), ներս խրցել—ներս խցկվել («պտտանին կարողացավ մարդկանց արանքից ներս խցկվել դեպի նախադասությունը»—Ձ. 64), առաջ քաշել—առաջ քաշվել («Վարդ սնն առաջ քաշվեց և...»—Ձ. 39), խոսք բացել—խոսք բացվել, ձեռք բերել—ձեռք բերվել և նման շատ օրինակներ:

Նման դեպքերում հարադիր բայերի կամ որոշ կարգի դարձվածքային արտահայտությունների մեջ մեծ մասամբ կարևոր դերը կատարում են բայերը, որոնք անցողական-ներգործական լինելով՝ ունեն նաև իրենց կրավորական ձևերը, ինչպես այդ սովորաբար անցողական պարզ բայերի դեպքում է (հմտ. բաշել-քաշվել, թափել-թափվել, խցկել-խցկվել, բացել-բացվել, բերել-բերվել և այլն):

Այսպիսով, ուրեմն, շրջման դեպքում, երբ ներգործական սեռի բայը կրավորական ենք դարձնում, փոփոխությունը կատարվում է ենթակայի և ուղղակի խնդրի հետ. ներգործական սեռի բայի (ստորագյալի) ենթական հաճախ

կորչում է և ուղղակի խնդիրը դառնում է եթական, իսկ անուղղակի խնդիրը, եթա՛յն կա, մնում է անփոփոխ: Այսպես՝ «երեկ, որ ինձ գործ հանձնարարեցիր դու...» — «երեկ, որ ինձ գործ հանձնարարվեց...», այստեղ առաջին (ներգործական) նախադասության «դու» ենթական երկրորդ (կրավորական) նախադասության մեջ կորչում է. առաջին նախադասության «գործ» ուղղակի խնդիրը երկրորդ (կրավորական) նախադասության մեջ դարձել է ենթական, իսկ առաջին նախադասության մեջ «ինձ» անուղղակի խնդիրը երկրորդ (կրավորական) նախադասության մեջ էլ մնացել է նույնությամբ (անուղղակի խնդիր): Այսպես անփոփոխ են մնում կրավորական նախադասության մեջ անուղղակի բոլոր խնդիրները (մատուցման, անջատման, գործիքի խնդիրները), եթե դրանք կան:

Օրինակներ կրավորական կառուցվածքի բայերից՝

ա) անուղղակի մատուցման խնդրով (նախադասություններ)՝ «ձին դեռ չէր ուղում վերջնականապես ենթարկվել իր նոր փրոջը» (Ձ. 15), «մեկը թռչելիս բախվեց ճրագին» (Ձ. 23) և այլն:

բ) անուղղակի անջատման խնդրով (նախադասություններ)՝ «գյուղացիները նրանից փաշվում էին» (Ձ. 108), «պիտի օգնենք, որ շշեղվի պարտիայի գլխավոր գծից» (Ձ. 29) և այլն:

գ) անուղղակի գործիքի խնդրով (նախադասություններ)՝ «Նա լցվում է պարծանքի զգացումով» (Ձ. 37), կամ՝ «սենյակը լցվեց ախորժելի ջերմությամբ» (Ձ. 87) և այլն:

դ) անուղղակի տարբեր խնդիրներով և ետադրություններով (նախադասություններ)՝ «կնոջից բաժանվում է, որ էմմայի հետ պսակվի» (Ձ. 32), «փորձեց հայացքով կապվել Ղազարյանի հետ, սակայն վերջինիս ուշադրությունը կլանված էր ուրիշ ուղղությամբ» (Ձ. 66) և այլն, և այլն:

Այսպիսով, անուղղակի խնդիրները բայի-ստորոգյալի շրջման ժամանակ փոփոխություն չեն կրում, փոխվում են միայն ենթական և ուղղակի խնդիրը: Ուրեմն, ներգործական-կրավորական ձևերը լեզվի միջոց են, որոնցով առարկայի կախումը գործողության հանդեպ երկու կերպ է դրսևորվում. մեկն այնպես, որ որևէ առարկա հանգես գա որպես ուղղակի խնդիր, իսկ երկրորդն այնպես, որ միևնույն առարկան նույն գործողության հանդեպ հանդես գա որպես ենթական: Այս բանը ավելի պարզ կլինի, եթե բայաձևի հետ համաձայնեցնենք համապատասխան անունները. «գիրքը հանձնեցին հեղինակին» — այստեղ հանձնեցին ներգործական սեռի բայ է, իսկ գիրքը՝ ուղղակի խնդիր. «Գիրքը հանձնվեց հեղինակին» — այստեղ արդեն հանձնվեց բայաձևը կրավորական ձև է, իսկ գիրքը՝ ենթական:

Սովորաբար, ինչպես վերևի օրինակներից էլ կարելի է տեսնել, ներգործական սեռի բայի-ստորոգյալի շրջման ժամանակ կրավորականում ներգործականի ուղղակի խնդիրը դառնում է ենթական, իսկ նրա ենթական շատ հաճախ անուղղակի խնդրի չի վերածվում, այլ կորչում է և չի երևում գործողության կատարողը (ներգործականի ենթական):

Բայց միշտ այսպես չէ, պատահում է նաև այնպես, որ ներգործականի ենթական իր արտահայտությունն է գտնում կրավորական նախադասության մեջ, որպես անուղղակի խնդիր: Նման դեպքերում կրավորական ձևերը իսկական կրավորական բայեր են:

Նման օրինակներից կարելի է բերել հետևյալները՝ «այդ բանից նա չէր վիրավորվում» (Մ. 11), «որպեսզի շնադրաբար չի առաջարկ տեսարանից» (Մ. 18), «...կանաչը վառվել էր արևից երփներանգ դույներով» (Մ. 54), «որոնցից նա խանձվել, սև դույն էր առել» (Մ. 61) և այլն:

Վերևի նախադասությունների մեջ բերված բայերը բոլորն էլ կրավորական են (–վ ածանցով)՝ կազմված համապատասխան ներդործական սեռի բայերից. այսպես՝ վիրավորել–վիրավորվել, վառել–վառվել, խանձել–խանձվել և այսպես մյուսները: Այստեղ –վ ածանցը միանալով ներդործական բայերին, տալիս է նրանց կրավորական սեռի նշանակություն, այն է՝ այդ շրջման հետևանքով առաջ է գալիս այնպիսի փոխհարաբերություն գործողություն կատարողի (ենթակայի) և գործողության առարկայի (ուղղակի խնդրի) միջև, երբ գործողության ռեալ օբյեկտը (ուղղակի խնդիրը) նախադասության մեջ հանդես է գալիս որպես ենթակա (ուղղական հոլովով), իսկ ռեալ գործողություն կատարողը (ենթական) հանդես է գալիս որպես անուղղակի խնդիր (բացառական հոլովով):

Այլ կերպ ասած՝ անձը կամ առարկան հանդես գալով ենթակայի գերով՝ գործողություն չի կատարում, այլ կարծես իր վրա է կրում ինչ–որ բանի գործողություն, հանդիսանալով այդ գործողության հանգման կետը, կամ հանդես գալով որպես գործողության հետևանք:

Պարզ է, որ կրավորական սեռի նշանակությունը որոշակիորեն բացահայտվում է, մի կողմից, ստորոգյալի (անցողական բայի) և ուղղակի խնդրի և, մյուս կողմից, ղրանից կազմված կրավորական ձևի զուգադրությունից: Բերենք վերևի օրինակներից մեկը՝ «Տանուտերի պատմածները Պետրոսին վրդովեցին»—«Տանուտերի պատմածներից Պետրոսը վրդովվեցավ» (Մ. 75):

Ինչպես այս զուգադրությունից երևում է, ուղղակի խնդիրը («Պետրոսին») կրավորական նախադասության մեջ դառնում է ենթակա («Պետրոսը»), բայց ցույց է տալիս ոչ թե գործող անձ կամ գործողություն կատարող, այլ կրավորական կերպով գործողություն ընկալող դեմք: Գործողություն կատարողը, որ անցողական–ներդործական սեռի բայի ժամանակ հանդես է գալիս ենթակայի ֆունկցիայով («պատմածները»), կրավորական նախադասության մեջ դառնում է անուղղակի անջատման խնդիր («պատմածներից»):

Ուրեմն, անուղղակի անջատման խնդիր (բացառական հոլովով, կամ սեռական հոլովով կողմից բառի հետ) առկայությունը նախադասության մեջ կրավորական բայի սեռի փայլուն ցուցանիշն է: Այդ անուղղակի խնդիր բացակայությունը, դրա գործածության դժվարությունը կամ անկարելիությունը, բնականաբար, թուլացնում է կրավորական սեռի բայի նշանակությունը: Նման անուղղակի անջատման (բացառական հոլովով, կամ սեռական հոլովով կողմից բառի հետ) խնդրով նախադասությունները համեմատաբար շատ քիչ են գործածվում ինչպես խոսակցական, այնպես էլ գեղարվեստական խոսքի (գրականության) մեջ: Սովորական են մյուս նախադասությունները, ուր կրավորական սեռի բայերը — ստորոգյալները չեն համաձայնվում անուղղակի անջատման խնդրի հետ: Անջատման այդ խնդիրը նախկին ենթական է սկզբնական ներդործական սեռի բայի–ստորոգյալի, որը հաճախ հանդես չի գալիս կրավորական նախադասության մեջ և դուրս է մնում որպես ավելորդություն:

2. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՆՐԲԵՐԱՆՔՆԵՐԸ

Ինչպես նախորդ հատվածում տեսանք, երբ անցողական-ներգործական բային ավելանում է -վ ածանցը, բայը կորցնում է անցողականության իմաստը և այլևս չի ընդունում ուղղակի խնդիր: Կրավորականի -վ ածանցը նման դեպքերում ցույց է տալիս գործողության անդրադարձում նույն գործողությունը կրողի՝ ենթակայի վրա. դա նշանակում է, որ ենթական իր մեջ կենտրոնացնում, պարփակում է բայի ցույց ափած գործողությունը: Այն գործողությունը, որ ներդրողական սեռի բայի ժամանակ ենթակայից անցնում է ուղղակի խնդրին, կրավորական-անդրադարձ սեռի բայի ժամանակ համապատասխան ձևով, կարծես թե, «անդրադառնում» է հենց իրեն ենթակային և կենտրոնացնում է նրա մեջ, գործողությունը կատարվում է ինքնին:

Այսպես, օրինակ, հավաքել մարդկանց — հավաքվել (մարդիկ), հագնել շորեր — հագնվել (ինքը), լվանալ ձեռները — լվացվել (ինքն իրեն), տատանել մի բան — տատանվել (ինքն իրեն. «Երիտասարդը, կարծես, տատանվում էր» — Մ. 21), բացել, կատարել մի բան — բացվել, կատարվել («Երիտասարդի ախորժակը հետզհետե բացվում էր, կամ գուցե նրա հետ կատարվում էր այն, ինչ որ...» — Մ. 79, կամ՝ «կբացվի առավոտ և...» — ԱԲ. 177) և այլն:

Այսպիսով, ուրեմն, կրավորական-անդրադարձ սեռի բայի էության համաձայն ներգործականի ենթական սովորաբար կորչում է, իսկ ուղղակի խնդիրը դառնում է ենթակա:

Նման դեպքերում եթե գործողությունը վերաբերում է անշունչ առարկային, ապա կրավորականի ձևը գործողությունն այնպես է ներկայացնում, որ ունի գործող անձը (ենթական) չի երևում. օրինակ՝ «Ճաշը եփվում է», «ղուռը մեխվում է», «գիրքը գրվում-տպվում է», «խաղը սկսվում է», «արկղը բացվում է», «վարագույրը ետ է փաշվում» և այլն:

Մանրություն.— Այստեղ, իհարկե, այլ են իմաստային տարբերությունում առաջ բերող բայերը, ինչպես օրինակ՝ լույսը բացվել «լուսանալ» («լույսը բացվում է» — Զ. 92), փաշվել «ամաչել» («Վարժապետը փաշվում էր...» — Մ. 37), կոտրատվել «նազանք անել, նազ անել, շեմ ու շում անել ձևի համար» («Ի՞նչ ես կոտրատվում») և այլն:

Իսկ եթե գործողությունը շնչավորին կամ որպես շնչավոր պատկերացվող առարկային է վերաբերում, ապա կրավորական ձևը երբեմն չափազանց ակտիվ գործողություն է վերագրում քերականական ենթակային, ինչպես, օրինակ՝ փաթաթվել, կծկվել («Պետրոսը փաթաթվեցավ վերարկուի մեջ, կծկվեցավ կառքի անկյունում» — Մ. 38), գտնվել («Վերջապես գտնվեց մեկը, որ...» — Մ. 48):

Այսպես է նաև՝ առաջ նետվել, առաջ շարժվել («Զուռնան ու նաղարան նվազելով առաջ շարժվեցին» — Զ. 97), առաջ փաշվել, ուղևորվել («Նրանք բոլորը միասին ուղևորվեցին» — Զ. 103) կամ նաճապարհվել, ընդհարվել, տարվել և այլն:

Բայց եթե սրանց էլ կրավորական ենք ասում, ապա այն պատճառով, որ սրանք էլ շրջված ձևերն են այն բայերի, որոնք հայտնի են որպես ներգործական սեռի բայեր (եփել-եփվել, մեխել-մեխվել, սկսել-սկսվել, բացել-բացվել, ետ փաշել-ետ փաշվել, փաթարել-փաթաթվել, կծկել-կծկվել, գտնել-գտնվել, հավասարել-հավասարվել) և այլն:

կրավորականի այս ընդհանուր բնույթին երբեմն ավելանում են այնպիսի նրբերանգներ, որոնք մասնավորապես այս կամ այն իմաստն են առաջ բերում:

Նման կրավորականներից են՝

ա) Հնարավորության կամ լինելության. այս խմբին պատկանում են այնպիսի կրավորականներ, որոնք ցույց են տալիս գործողության հնարավորություն: Այդ հնարավորությունը կա՛մ ունի ֆիզիկական բնույթ, այն է՝ ֆիզիկական «հնարավոր է», կա՛մ էլ ենթադրվում է, որ գործողությունը թույլ է տրված, բնորոշված է, արգելված չէ, այսինքն՝ այնպիսին է, որ «հնարավոր» է: Նման ձևերից են՝ ուսվում է, խմվում է, խոսվում է, ասվում է և այլն: Ասում ենք, օրինակ, «սունկի մի տեսակ կա, որ չի ուսվում» (այն է՝ հնարավոր չէ ուսել, կամ ուսել չի լինում), «գինի կա, որ խմվում է. գինի էլ կա, որ չի խմվում» (այն է՝ խմել լինում է կամ չի լինում). «Այսպես էլ է ասվում, այնպես էլ» (այն է՝ կարելի է ասել). «Ամեն բան չի ասվի» (այն է՝ հնարավոր չէ ասել, կամ ասել չի լինի). «Այս մասին լավ էլ կխոսվի, վատ էլ կխոսվի» (այն է՝ խոսել կարելի է, կամ հնարավոր է), ինչպես նաև՝ չի կարգացվում «կարգալ չի լինում», չի զգացվում «զգալ չի լինում», չի երգվում «երգել չի լինում» և այլն:

Ծանոթություն 1. Ուշագրավ է, որ հնարավորության կրավորականը չեղոք բայերից էլ է կազմվում, օրինակ՝ «տանը չի նստվում», «այստեղ չի ապրվում» և այլն: Այն չեղոք բայը, որ իմաստով փոխարինում է ներգործական բային, կամ ներգործական բայի առումով է գործածված, կարող է կրավորական ձև էլ ստանալ. նստել չեղոք բայը «հեծնել» իմաստով ստանում է նստվել կրավորական ձևը, ինչպես որ է, օրինակ, Վ. Միրոքյանի մոտ՝ «Մի խամ, չնստված վայրի քուռակի ամեն կողմից էլ կալմեջ են անում...» (տե՛ս «Հալվարի որսը», 1953, էջ 19):

Ծանոթություն 2. Հարադիր բայերը «գալ» բայով՝ կրավ. կամ չեզոք իմաստով «ուղենալու» գաղափար են տալիս, ինչպես, օրինակ՝ Բուս գալիս է «քնել եմ ուզում»—քունս չի գալիս «քնել չեմ ուզում», ծիծաղս գալիս է կամ ծիծաղելս գալիս է «ծիծաղել եմ ուզում», լացս գալիս է «լաց լինել եմ ուզում», երգելս գալիս է «երգել եմ ուզում» և այլն:

բ) Անդրադարձ կամ ինքնին. այս խմբին պատկանում են այն բայերը, որոնք ցույց են տալիս մի գործողություն, որ տարածվում է գործող անձի ներսում և նրա մեջ առաջ է բերում բայի բառական արժեքին համապատասխան ներքին փոփոխություններ: Նման բայերում -վ ածանցը սովորաբար ունի «ինքն իրեն» նշանակություն և այդպիսով կատարվում է պարզ անդրադարձում իր՝ գործողություն կատարող անձի կամ երբեմն որպես անձ պատկերացվող կամ հենց ուղղակի առարկայի վրա: Դրանք ցույց են տալիս կոնկրետ գործողություն: Դրանցից են, օրինակ՝

1) այն բայերը, որոնց մեջ գործողությունը միաժամանակ գործողության խնդիր է. այսպես՝ հանվել, հագնվել («զիտում էր նրան հանվելիս և հագնվելիս»—Ձ. 38), լվացվել («էլուշը լվացվեց»—Ձ. 114), սանրվել, շպարվել, ֆսվել, սավրվել («Ասատուրը մաքուր սափրված էր»—Ձ. 256), բորբոքվել («Բորբոքվեց Մաթոս Գրիգորյանը»—Ձ. 30), զրգովել («զրգովեց Փառանձեմը»

—Ձ. 32) և այլն¹։ Նման բայերի թիվը շատ չէ։ Այս կարգի մյուս բայերը, որոնց մեջ —վ ածանցը բային տալիս է գործողության կենտրոնացման, սահմանափակվածության նշանակություն իր գործողությունն կատարողի մեջ, շատ են. դրանք են՝

2) Այն բայերը, որոնք ցույց են տալիս գործողությունն կատարողի ներքին, ֆիզիկական փոփոխություն, փոփոխություն վիճակի՝ հաճախ շարժման մեջ, օրինակ՝ նետվել, ցնցվել («նետվում էր մահճակալի վրա, երկար ցնցվում էր հեկեկանքից» — Ձ. 215), կծկվել, Լփվել («բայց ինքն իրեն եփվում էր» — Ձ. 66), շտկվել («պրակտիկանտուհին տեղում շտկվեց» — Ձ. 67), կտրվել («անձրևը կտրվել էր» — Ձ. 287) և նման այլ բազմաթիվ օրինակներ, ուր գործողությունն կատարող կարող են լինել թե՛ շնչավոր և թե՛ անշունչ առարկաները։

3) Այն բայերը, որոնք ցույց են տալիս մարդու ներքին հոգեկան վիճակ ու ապրումներ, ուստի գործողության կատարողը կարող է լինել միայն գործող անձ կամ շնչավոր առարկա. դրանցից են՝ հուզվել («հավատացած ևմ, որ շատ պիտի հուզվիք ու...» — Մ. 50), համոզվել («Ղազարյանը վերջնականապես համոզվեց, որ...» — Ձ. 67), վիրավորվել («Ղազարյանը... վիրավորվեց» — Ձ. 65), ոգևորվել («նրանք երկուսն էլ ոգևորվեցին» — Ձ. 50) և այլն։

4) Փոխադարձ. Փոխադարձ պարզ նշանակությունը առաջ է գալիս այնպիսի բայերի մեջ, որոնք ցույց են տալիս գործողությունն երկու կամ երկուսից ավելի անձների միջև, որոնցից ամեն մեկը մյուսի հանդեպ հանդիսանում է գործողություն կատարող և գործողության առարկա։ Սրանք կարող են միայն լինել գործող անձեր կամ շնչավոր առարկաներ։ Օրինակ՝ փառարվել («նրանք փառարվեցին իրար» — Ձ. 579), համբուրվել («համբուրվեցան բարեկամուհիները» — Մ. 21), զբվվել («ամուր զբված էին իրար հետ») և այլն։

Կրավորականի —վ ածանցի այնպիսի նշանակություն, ինչպիսին է, օրինակ, «իրար, իրարու, մեկը մյուսին» և այլն, պարզ արտահայտվում է սակավաթիվ բայերի մեջ և այն էլ այնպիսի դեպքերում, երբ այդ բայերը գործ են ածվում հոգնակի թվով։

Ծանոթություն. — Նման բայերը եթե գործ են ածվում եզակի թվով, ապա երկուսի փոխադարձ գործողություն, փոխադարձություն արտահայտելու համար անհրաժեշտ է, որպեսզի բայի հետ հանդես գա «մեկի հետ» կամ «մեկին» անուղղակի խնդիրը, օրինակ՝ «քույրը համբուրվեց եղբոր հետ» (այսինքն՝ «քույրն ու եղբայրը համբուրվեցին»)։ Այսպես նաև՝ պսակվել՝ («գուք պսակվում եք Լևոն Լամբարյանի հետ» — Ձ. 35), փառարվել («Փաթաթվեց նրա վզով» — Ձ. 180) և այլն։

Է. ԿՐԱՎՈՐԱԶԵՎ ՉԵԶՈՔ ԲԱՅԵՐԸ

Ինչպես հայտնի է, —վ ածանցը սովորաբար ներդործական բայերից կաղմում է կրավորական ձևեր։ Երբեմն այդ կրավորական բայաձևերը դառնում են այնպիսի ինքնամիտի ձևեր, ուր ենթական (այն է՝ սկզբնական ներգործական

¹ Նման օրինակներից են նաև Բաֆֆուց՝ «նա շուտով լվացվեցավ, սանրվեցավ, հագնվեցավ և ղնաց մոր սենյակը» (էջ 29), կամ՝ «նա լվացվում է, սրբվում է և ղիմում է ղեպի յուր հայկին, ամբողջ ժամերով չի հեռանում Նրանից, սանրվում է, օծվում է և հագնվում» (Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. II, Երևան, 1955, էջ 48)։

սեռի բայի ուղղակի խնդիրը) «գործում» է ինքնին, ինչպես այդ սովորաբար չեզոք բայերի ժամանակ է:

Այս է պատճառը, որ այսօրվա մի շարք չեզոք բայերի մեջ հանդես եկող կրավորականի -վ ածանցը տարօրինակ չէ, թեև դա ըստ էության ձևի և բովանդակության (ֆունկցիայի) մի տեսակ խզման արդյունք է: Այդ -վ ածանցը ոչ թե իր իսկական դերն է կատարում (այն է՝ ոչ թե կրավորականի իմաստն է արտահայտում), այլ վերջին հաշվով ոչ մի իմաստ չի արտահայտում, դա, եթե կարելի է այսպես ասել, ավելորդ է այդ կարգի չեզոք բայերի մեջ:

Այս -վ ածանցը, որ սովորաբար կրավորական ձևեր է կազմում մեր նոր գրական հայերենում, աշխարհարարի արդյունք է, ուստի պարզ է, որ դա գրաբարում չկար (գրաբարը կրավորական ձևերը այլ միջոցով էր կազմում): Այս տեսակետից էլ գրաբարի որոշ չեզոք բայեր աշխարհարարում, այդտեղից էլ՝ գրական մեր նոր հայերենում, գործ են ածվում միայն -վ ածանցով, ինչպես, օրինակ՝ ապստամբվել (հին՝ ապստամբեմ), զանգատվել (հին՝ գանգատիմ)¹, գունատվել (հին՝ գունատեմ)², միամտվել (հին՝ միամտեմ), ամոքահարվել (հին՝ ամօթահարիմ), գրկախառնվել (հին՝ գրկախառնիմ), քաֆնվել (հին՝ թաքնում||թաքչիմ)³, խելագարվել (հին՝ խելագարիմ)⁴ և այլն:

Այսօրվա (-վ ածանցով կազմված) կրավորաձև չեզոք բայերի հին համարժեքները նմանապես, ինչպես արդեն ասացինք, չեզոք բայեր էին հնում (բնականաբար առանց այդ -վ ածանցի): Նման դեպքերում կրավ. -վ ածանցը ըստ էության ոչ մի փոփոխություն առաջ չի բերում, դրանով, կարծես, եթե կարելի է ասել, այդ հին (չեզոք) իմաստը ամբապնդվում է կամ հաստատվում:

Բայց ավելի շատ այդ -վ ածանցի գործածությունը հիմնավորվում է այնպիսի բայերում, որոնք հնում (գրաբարում) եղել են կա՛մ՝ ներգործական, որ համեմատաբար շատ քիչ են, և կա՛մ՝ միաժամանակ թե՛ ներգործական և թե՛ կրավորական-չեզոք (օրինակ՝ այլալիմ «փոփոխում եմ»՝ ներգործ. և այլալիմ || այլալիմ «փոփոխվում եմ»՝ կրավ. -չեզոք): Նման ներգործական սեռի բայերից -վ ածանցով, ըստ երևույթին՝ այդ -վ ածանցի առաջացման պրոցեսում, կազմվել են համապատասխան կրավորական ձևեր: Հետագայում, ժամանակի ընթացքում, սրանց համապատասխան ներգործական ձևերի ակտիվությունը աստիճանաբար թուլանալու կամ իսպառ վերանալու հետևանքով աշխարհարարում, այդտեղից էլ գրական մեր նոր հայերենում հաստատվում են պասսիվ-կրավորական ձևերը, որպես չեզոք սեռի հատուկ բայեր (կրավորաձև չեզոք բայեր):

Անհամեմատ ավելի շատ են այնպիսի կրավորաձև չեզոք բայերը, որոնք կազմված են հին՝ միաժամանակ թե՛ ներգործական և թե՛ կրավորական-չեզոք սեռ ունեցող բայերից: Դրանցից են, օրինակ, այլալվել (հին՝ այլալեմ||այլալիմ՝ ներգործ. և չեզոք)⁵, ապափնվել (հին՝ ապափնեմ՝ ներգործ. և չեզոք.) աջողվել||նաջողվել (հին՝ աջողեմ||նաջողեմ||նաջողիմ՝ ներգործ. չեզոք.)⁶, զծովել

¹ «Ոմանք զանգատվում էին, թե...»—Ձ. 10, «նամակաների մեջ հարուղը զանգատվում էր» — ԱԲ. 16:

² «Նա հանկարծ գունատվեց...»—Ձ. 180, «դիչերվա լազուրը գունատվեց» — ԱԲ. 231:

³ «Ոչ որի չի հաջողվի դրա տակ քաքնվել» — Ձ. 130:

⁴ «Դու խելագարվել ես, այ կին» — Ձ. 451:

⁵ «Նա սաստիկ այլալվեց հ...» — Ձ. 319:

⁶ «Բայց այդ նրան չնաջողվեց» — Ձ. 67:

(Հին՝ դժտեմ||գժտիմ՝ ներգ. և չեզ.), գրադվել (Հին՝ գրադեմ||գրադիմ՝ ներգ. և չեզոք)¹, րնդհարվել (Հին՝ րնդհարիմ՝ ներգ. և չեզ.)² և այլն:

Այո ձևերի նմանությունը աշխարհարարում, ինչպես գրական նոր հայերենում, այնպես էլ բարբառներում ու խոսակցական լեզվում, կազմվել են մի շարք նման (կրավորական-չեզոք) բայաձևեր: Դրանցից են, օրինակ՝ ամպոտվել (նաև՝ ամպոտել) «ամպելով ծածկվել», բրբռ. բախտակոծվել «բախտը ողբալ, յուր բախտի վրա կոծ անել», բռնկվել (երբեմն նաև՝ բռնկել) «բռնկվալ», բրդոտվել, գժվել «խելագարվել» («—Գժվե՞լ ես, ինչ է» — Զ. 17, «—Դու գժվեցիր», Հասմիկ — Զ. 417), սիրահարվել («նա վաղուց արդեն սիրահարված էր Արուսի վրա» — Զ. 176) և այլն, և այլն:

Ը. ԵՐԿՍԵՆԻ ԲԱՅՆԵՐԸ

Երկու (ներգործական և չեզոք) սեռ ունեցող բայերի մի զգալի մասը գործ է ածվում այսօր միայն պասսիվ-կրավորական ձևով (—վ ածանցով), որպես կրավորաձև չեզոք բայեր, որոնք կորցրել են իրենց երբեմնի ներգործական սեռի իմաստը, ինչպես, օրինակ, աշողվել «գլուխ գոլ, նպատակին հասնել» (Հին՝ աջողիմ «աջողվել»՝ չեզոք և աջողիմ «գլուխ բերել»՝ ներգ.), համաձայնվել (Հին՝ համաձայնիմ || համաձայնեմ «համաձայնվել»՝ չեզոք և համաձայնեմ «համաձայնեցնել»՝ ներգ.), հուսահատվել (Հին՝ յուսահատիմ «հուսահատվել»՝ չեզոք և յուսահատեմ «հուսահատեցնել»՝ ներգ.), նեխվել «փտել» (Հին՝ նեխիմ «նեխվել, փտել»՝ չեզոք և նեխեմ «նեխեցնել, փտեցնել»՝ ներգ.), սրափվել (Հին՝ սթափիմ «սթափվել»՝ չեզոք և սթափեմ «սթափեցնել»՝ ներգ. «Հետո սթափվեց ու քայլերն ուղղեց...» — ԱԲ. 65), հանդարտվել (Հին՝ հանդարտիմ «հանդարտվել»՝ չեզոք և «հանդարտեցնել»՝ ներգ.), ցնդվել || ցնդել (Հին՝ ցնդիմ «ցնդվել, պայթել»՝ չեզոք և ցնդեմ «ցնդեցնել»՝ ներգ.)³ և այլն, և այլն:

Հին երկսեռ բայերի մի զգալի մասն էլ կորցնելով ներգործական սեռի իմաստը աշխարհարարում, այդտեղից էլ՝ վրական նոր հայերենում, գործ է ածվում միայն որպես չեզոք բայեր: Նման բայերից է, օրինակ, աշակերտվել բայը (Հին՝ աշակերտեմ՝ ներգ. և չեզոք), որ հնում նշանակել է, նախ և առաջ, «աշակերտ պահել, սովորեցնել» (որպես ներգործական սեռի բայ) և ապա ունեցել է երկրորդ՝ «աշակերտություն անել, մեկի մոտ սովորել» իմաստը (որպես չեզոք սեռի բայ). այս վերջին (չեզոք սեռի) իմաստով էլ պահպանված է հիշյալ բայը գրական նոր հայերենում:

Այսպես նաև՝ արտափայլել բայը (Հին՝ արտափայլեմ՝ ներգ. և չեզոք) հնում նշանակել է «գուրս փայլեցնել, պայծառեցնել»՝ որպես ներգործ. և ապա՝ «գուրս փայլել, պայծառանալ, ճառագայթել, ծագել»՝ որպես չեզոք (այսօր միայն վերջին՝ չեզոք իմաստով է պահպանված հիշյալ բայը), բաբախել (Հին՝ բարախեմ՝ ներգ. և չեզ.) հնում նշանակել է «ծեծել (ղուր), բախել»՝ որպես ներգ. և ապա գործ է ածվել չեզոք իմաստով. այսօր գործ է ածվում միայն չեզոք «սրտի բարախել» նշանակությամբ. բարգավաճել (Հին՝ բարգա-

¹ «Երանք գրավում են աչքակապությունը» — Զ. 68:

² «ս չէի կարող...բեզ հեա րնդհարվել» — Զ. 231:

³ Գործ է ածվում նաև գնդել ձևով (առանց -վ-ի), որպես չեզոք բայ, օրինակ՝ «սառնիկ պղպղակի պես ցնդում է առավոտյան կայացրած որոշումը» (Զ. 115):

ւտճեմ՝ ներգ. և բարդաւաճիմ՝ չեզ.) հնում նշանակել է «փառալուրել, պաւալել, առաջացնել» որպէս ներգ. և ապա՝ «ծաղկել, զարգանալ, առաջ գնալ»՝ որպէս չեզոք. այս վերջին իմաստով էլ պահպանված է այսօր. զարշել (հին՝ զարշեմ՝ ներգ. և չեզ.) հնում նշանակել է, նախ, «զարշելի համարել, մերժել՝ իրրե զարշելի բան» որպէս ներգ. և ապա՝ «զգվել, խորշել»՝ որպէս չեզոք. այս իմաստով էլ պահպանված է այսօր և այլն:

Բերենք սրանց նման մի շարք ալլ բայեր, որոնք իրենց ներգործական սեռի իմաստը կորցնելով՝ պահպանել են միայն չեզոք իմաստը: Այգ բայերից են՝ դալարել «կանաչել, բուսնել» (հին՝ դալարիմ՝ ներգ. և չեզոք), դոնչել թնդալ, զղըրդալ» (հին՝ դոնչեմ || զոնչիմ՝ ներգ. և չեզ.), րառամել «թոշնել» (հին՝ թառամեմ՝ ներգ. և չեզ.), խորշել «զարշելով խուսափել» (հին՝ խորշեմ՝ ներգ. և խորշիմ՝ չեզ.), ծիել «ծիլ արծակել, սկսել բուսնել» (հին՝ ծլեմ՝ ներգ. և ծլիմ՝ չեզ.), միարանել (հին՝ միարանեմ՝ ներգ. և միարանիմ՝ չեզ.), հորդել «բխել» (հին՝ յորդեմ՝ ներգ. և չեզ.), նվազել «պակասել, քչանալ» (հին՝ նուազեմ՝ ներգ. և նուազիմ՝ չեզ.), նվաղել «ուշքը դնալ, թալկանալ, նվաղել» (հին՝ նուաղեմ՝ ներգ. և նուաղիմ՝ չեզ.), սանել (հին՝ սահեմ՝ ներգ. և չեզ.), փրպել (հին՝ վրիպեմ՝ ներգ. և չեզ.), փալլել (հին՝ փալլեմ՝ ներգ. և չեզ.), ինչպէս նաև՝ աւտառնել «դուրս հոսել՝ թափվել» (հին՝ արտահոսեմ «դուրս հոսեցնել»՝ ներգ.) և այլն:

Կա և՛ հակառակ երևույթը, երբ երկսեռ՝ ներգործական և չեզոք սեռի բայերի մէջ միացնում ու մարում է ոչ թե ներգործական, այլ չեզոք սեռի իմաստը և շարունակվում է պահպանվել միայն ներգործական սեռի իմաստը, կամ, ընդհակառակը, չեզոք սեռի իմաստը կորչում է և առաջ է գալիս ներգործական սեռի իմաստը:

Բերենք մի քանի օրինակ. գուծել բայը (հին՝ գուծեմ՝ ներգ. և չեզոք) այսօր նշանակում է «գուծք տարածել, վատ լուր հաղորդել», որպէս ներգործական բայ (հնում նշանակել է նաև «գուծի ձայն բարձրացնել, ճշալ, ողբալ, լացուկոծ անել»՝ որպէս չեզոք բայ), բորել (հին՝ թորեմ՝ ներգ. և չեզոք) այսօր նշանակում է «կաթ-կաթ հոսեցնել, վաղեցնել, կաթկթեցնել», որպէս ներգործական բայ (հնում նշանակել է միաժամանակ «կաթ-կաթ հոսել, կաթկթել»՝ որպէս չեզոք բայ) և այլն:

Եվ միաժամանակ մի շարք հին չեզոք բայեր զարգացրել են ներգործական սեռի իմաստը. այսպէս օրինակ՝ զիջել բայը (հին՝ զիջանեմ || զիջանիմ՝ չեզոք) այսօր գործ էածվում միայն որպէս ներգործական բայ («մի բան զիջել» իմաստով), նանապարհել (հին՝ ճանապարհեմ || ճանապարհորդեմ՝ չեզոք) այսօր գործ էածվում միայն որպէս ներգործական բայ («ճանապարհ գցել, ուղարկել» իմաստով), սովորել (հին՝ սովորեմ || սովորիմ՝ չեզոք) այսօր գործ էածվում որպէս ներգործական բայ («մի բան սովորել, ուսանել» իմաստով), փափազել (հին՝ փափազեմ՝ չեզոք) այսօր գործ էածվում ներգործական իմաստով («շատ ցանկանալ մի բան») և այլն:

Բայց սրանց դիմաց կան նաև այնպիսի բայեր, որոնք պահպանվել են երկու՝ ներգործական և չեզոք սեռի իմաստներով: Նման երկսեռ բայերից են՝ ապրել («երկար ապրեց» և «Արուստը նույնպէս ապրում էր խորր տագնապ»—Ձ. 178), աշխատել («գործել, աշխատել» և «մի բան վաստակել» նշանակութեամբ), բարբառել («ձայն տալ, կանչել» և «մի բան արտաբերել, խոսել» նշանակութեամբ), բուրել («հոտ դուրս գալ» և «հոտ արծակել»), հնչել («ձայն դուրս

գալ» և «ձայն հանել, հնչեցնել»), հոգալ («հոգս տանել» և «կարիքները բավարարել»), շրջել («պտտվել, դառնալ» և «պտտել, դարձնել»), մեկնել («գնալ» և «պարզել, մեկնել»), շնչալ («կարծես ինքն իրեն շնչաց» — Զ. 363 և «Հասմիկն իր վրդովմունքը շնչաց Վասակի ականջին» — Զ. 356), երկարել («երկարանալ» և «երկարացնել» — «դղրդալից երթը հրապարակից երկարեց մինչև կամուրջ» — Զ. 97 և «վիզը երկարեց դեպի տրիրունը» — Զ. 96) և այլն, և այլն:

Երկսեռ բայերի մեջ սովորաբար ավելի ուժեղ է դրսևորվում սեռերից մեկը մյուսի համեմատությամբ: Եթե նման բայերի մեջ ուժեղ է արտահայտվում ներգործական սեռի զաղափարը չեզոք սեռի համեմատությամբ, ապա նման բայերը սովորաբար հանգես են դալիս որպես զուտ ներգործական բայեր և ունեն իրենց անմիջական կրավորական ձևերը, ինչպես այդ ընդհանրապես ներգործական բայերին է հասուկ: Իսկ նրանց չեզոք սեռը կա՛մ հանգես է գալիս որպես առանձին բայ, նոր իմաստով, կա՛մ էլ իմաստի մի տեսակ մթաղնումով սակավ է գործածվում: Այսպես, օրինակ, շրջել բայը երկսեռ բայ է և ցույց է տալիս, նախ՝ «շուռ տալ, դարձնել»՝ ներդ. և ապա՝ «շուռ գալ, պտտվել, դառնալ»՝ չեզոք. այս բայը, որպես ներգործական, ունի կրավորական ձև՝ շրջել-շրջվել, իսկ չեզոք իմաստով շրջել «պտտվել, ման գալ» բայը այլ առումով է գործածվում և հանգես է գալիս որպես առանձին բայ:

Այսպես նաև՝ մեկնել (ներդործ.) — մեկնվել (կրավ.), բայց այլ է մեկնել «դուրս գալ, ուղևորվել, գնալ»՝ չեզոք. խաղալ (ներդ.) — խաղացվել (կրավ.), բայց այլ է խաղալ՝ չեզոք. նայել (ներդ.) — նայվել (կրավ.), բայց այլ է նայել՝ չեզոք. հնչել (ներդ.) — հնչվել (կրավ.), բայց և՛ հնչել (չեզոք). խոսել (ներդ.) — խոսվել (կրավ.), բայց և խոսել (չեզ.), սպասել (ներդ.) — սպասվել (կրավ.), բայց և սպասել (չեզ.). մրազնել (ներդ.) — մրազնվել (կրավ.), բայց և՛ մրազնել (չեզ.), երեւել (ներդ.) — երեւվել (կրավ.), բայց և՛ երեւալ (չեզ.) և այլն:

Պատկերացություն. — 1. Նման երկսեռ բայերի դեպքում ինչպես ներգործական սեռի առումից կազմվում է կրավորական (շրջել-շրջվել), այնպես էլ չեզոքի առումից՝ պատճառական (շրջել-շրջեցնել. օրինակ՝ «Բարձրացրին Կամսարյանին դեպի առաստաղը և սկսան շրջեցնել դահլիճի շուրջը» — Մ. 12): Այսպես նաև՝ խաղալ՝ ներդ. — խաղացվել՝ կրավ. և խաղալ՝ չեզ. — խաղացնել՝ պատճ., հնչել՝ ներդ. — հնչվել՝ կրավ. և հնչել՝ չեզ. — հնչեցնել՝ պատճ. խոսել՝ ներդ. — խոսվել՝ կրավ. և խոսել՝ չեզ. — խոսեցնել՝ պատճ., սպասել՝ ներդ. — սպասվել՝ կրավ. և սպասել՝ չեզ. — սպասեցնել՝ պատճ. և այլն: Նման դեպքերում հնարավոր է, որ անցողական-պատճառական ձևերը կազմվեն երկսեռ բայերի հենց ուղղակի ներգործական առումից, քանի որ սովորական (միասեռ) ներգործական որոշ բայերից էլ կազմվում են կրկնակի անցողական-պատճառական ձևեր: Բայց անցողական-պատճառական ձևերը սովորաբար կազմված են չեզոք (ինչպես նաև՝ կրավորական չեզոք) բայերից, ուստի նման դեպքերում էլ շատ հնարավոր է, որ անցողական-պատճառական ձևերը կազմվել են երկսեռ բայերի չեզոք առումից:

Մանրորություն 2. — Որոշ երկսեռ բայեր աշխարհաբարում, ինչպես նաև գրական նոր հայերենում, իրենց արտահայտած սեռերի ձևական տարբերակումը դրսևորում են անորոշ գերբայների վերջավորություններով (-ել վերջավորությունը ներգործական սեռ է արտահայտում, իսկ

-ալ վերջավորությունը՝ չեզոք). այսպես, օրինակ՝ ծխել (հին՝ ծխեմ «խունկ ծխել») «մի բան ծխել» ներգ. և ծխալ (հին՝ ծխիմ «մոխհ հանել, մխալ»)՝ չեզոք. երեւել (հին՝ երերամ «երերեցնել» ներգ.) և երեւալ (հին՝ երերիմ «դողդողալ»)՝ չեզոք. այսպես նաև՝ րվել ու րվալ, ցոլել «ողողել» և ցողալ «անձրեւել», շաղել և շաղալ, ծփել և ծփալ, ցուծալ և ցուծալ:

Այսպիսով, ուրեմն, բայի սեռերը հիմնականում կապված լինելով քերականական կառուցվածքի հետ, քերականների մոտ (Այտրեյան, Պալասանյան, Աբեգյան, Դարիրյան, Սեալ և այլն) իրենց արտացոլումը գտել են մի քանի հիմնական դժերով (դասագրքերի սահմաններում): Հաշվի առնելով այդ բոլորը և գեղարվեստական գրականության վերցնելով թարմ նյութ՝ հարուստ փաստերի հիման վրա աշխատեցինք ավելի մանրամասն քննության ենթարկել բայի սեռերը: Ընդ որում բայի սեռերի քննությունը հիմնականում կապված լինելով քերականական կառուցվածքի քննության հետ, միաժամանակ բացահայտում է բայի սեռերի՝ այս կամ այն չափով ունեցած բառակազմական կամ, ավելի ճիշտ, բայակազմական դերը, այն է՝ բայի սեռերի (հատկապես կրավորական սեռի) ձևավորման հետ միասին որոշ բայերից ձևավորվում (կազմվում) են նոր, առանձին բայաձևեր: Դա իր արտահայտությունն է գտնում մանավանդ տյնպիսի դեպքերում, երբ բայի սեռեր արտահայտող ածանցները բայաձևերի մեջ, մի կողմից, առաջ են բերում իմաստային որոշ նրբերանգներ կամ առումներ, ինչպես, օրինակ՝ շաղել և շաղվել, տանել և տարվել... և, մյուս կողմից, այն ձևերը, որոնցից կազմվել են սեռային նոր ձևեր, հնացած (մահացած) լինելով՝ հաճախ չեն դորժածվում կամ սահմանափակ դորժածություն ունեն (հանդես են եկել գրականության որոշ շրջանում), ինչպես, օրինակ՝ գնալի և գմալվի, բռնելի և բռնկվի, գրաղել և գրաղվի, սրափել և սրափվի... և այլն: Թեև նման դեպքերում ածանցավոր ձևերը, որպես առանձին բայաձևեր, թվով շատ չեն, կամ իրենց կողքին գոյություն ունեցող քերականական (սեռային) համապատասխան ձևերի համեմատությամբ ավելի սակավ են հանդիպում, բայց պետք է ասել, որ զրանցով էլ, այնուամենայնիվ, այս կամ այն չափով, համարվում կամ հարստանում է լեզվի բառային կազմը:

ЗАЛОГИ ГЛАГОЛА В НОВОЛИТЕРАТУРНОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. А. МУРАВАЛЯН

(Р е з ю м е)

Залоги глагола армянского языка в связи с грамматическим строем исследованы армянскими грамматистами (Айтинян, Паласанян, Абегиан, Гарибян и др.) только в некоторых основных чертах (в пределах учебников). Принимая во внимание указанное, а также на основании извлеченных из художественной литературы свежих материалов и богатых фактов, в данной статье детально рассмотрены залогии глагола армянского языка. Причем настоящее исследование рассматривает главным образом грамматический строй армянского языка и одновременно выяв-

ляет роль залогов в словообразовании или, вернее, глаголообразовании в новом литературном армянском языке. Это находит свое выражение особенно в тех случаях, когда залоговые суффиксы в глагольных формах, с одной стороны, выявляют определенные смысловые оттенки (как, например, *տանկի* — «1) нести, 2) выиграть» и *տանկի* — «1) увлечься, 2) проиграться», и, с другой стороны, те глагольные формы, от которых произошли новые залоговые формы, которые, будучи устарелыми (мертвыми) часто не употребляются или употребляются ограниченно (они встречаются в разных сферах нового литературного армянского языка, как, например, *զմայի* — старая форма и *զմայի* — новая форма «восхищаться»...) и т. д.

Хотя в подобных случаях суффиксированные глаголы, как отдельные глагольные формы, числом невелики или по сравнению с соответственными грамматическими формами встречаются реже, тем не менее при помощи их, в той или иной мере, пополняется и обогащается словарный состав армянского языка.